ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ (ԹՕՍՈՒՆԵԱՆ), ՈՐ Ի ԲԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Գոհունակութեամբ տեղեկացանք, որ այս տարի լրանում է Ձեր հասարակական եւ գրական-մշակութային գործունէութեան 55-րդ տարեդարձը: Նշանակալի այս առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեծարգոյ պրն Ժիրայր Նայիրի, Ձեր կեանքի յիշարժան այս հանգրուանը Դուք դիմաւորում էք մտաւորականի ազգօգուտ գործունէութեան հարուստ վաստակով, ճանաչուած ու սիրուած հաւատաւոր մեր ժողովրդի կողմից:

Տասնեակ տարիներ Դուք եղել էք պատասխանատու խմբագիրը «Արարատ» օրաթերթի՝ Ձեր ջանքերը ներդնելով, որպէսզի պարբերականը շարունակի մեր ժողովրդի զաւակներին հաղորդ դարձնել սփիւռքահայ համայնքներում, Մայր Հայրենիքում եւ մեր Սուրբ Եկեղեցու կեանքից ներս տեղի ունեցող կարեւոր իրադարձութիւններին՝ նպաստելով նրանց հոգիներում ազգանուէր ոգու ու նկարագրի ձեւաւորմանն ու պահպանմանը: Նոյն նախանձախնդրութեամբ Դուք այսօր հրատարակում էք «Նայիրի» շաբաթաթերթը՝ շարունակելով գնահատարժան ծառայութեամբ Ձեր աւանդը բերել ազգային մեր կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Արդիւնաշատ է նաեւ Ձեր ստեղծագործական գործունէութիւնը, որի վկայութիւնը Ձեր հեղինակած եւ խմբագրած բազմաթիւ գրքերն են, հրապարակախօսական յոդուածները, յուշագրութիւններն ու ուսումնասիրութիւնները:

Մեզ համար մասնաւոր գոհունակութիւն է հաստատել, որ Ձեր գործունէութեան ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք անկեղծ նուիրում ու նախանձախնդրութիւն հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: «Արարատի» էջերում հրապարակած Ձեր յոդուածներով Դուք քաջալերել էք մեր ժողովրդի զաւակներին հակառակ ամեն դժուարութեան, անխախտ պահել հաւատարմութիւնը Սուրբ Էջմիածնի նկատմամբ եւ որդիական պատրաստակամութեամբ օգտակարութիւն բերել նրա շինութեանն ու պայծառութեանը: Մենք ժամանակին ականջալուր ու վկայ ենք եղել, թէ որքան բարձր էր գնահատում Ձեր եկեղեցանուէր ծառայութիւնները եւ էջմիածնասէր ոգին երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ հայրական իր սէրն ու օրհնութիւնը բերելով հաւատաւոր հայորդուդ:

Սիրելի պրն Ժիրայր Նայիրի, ի գնահատութիւն ազգային մեր կեանքում Ձեր երկարամեայ արդիւնաշատ գործունէութեան, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ շքանշանի պարգեւը առաւել պիտի ոգեւորի եւ խանդավառի Ձեզ՝ նոր արգասաւորութեամբ ծառայելու մեր ժողովրդին ու Եկեղեցուն:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջառողջ երկար կեանք, գործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ երկնատուր ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Հոկտեմբերի
Ցամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 262